ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

6 մայիսի 2011թ. **N------ -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու, Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կանոնադրությունները, դրանց կառուցվածքն ու հաստիքացուցակը հաստատելու մասին» N3-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման N 3 հավելվածում՝

ա. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» գլխի «1. Վարչություններ» կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 25-րդ կետով.

«25) Տնտեսագիտական վերլուծության, պլանավորման և մեթոդաբանության վարչություն»,

2) Որոշման N 4 հավելվածում՝

ա. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «Տնտեսագիտական վերլուծության, պլանավորման և մեթոդաբանության վարչություն» գլխով.

	Տնտեսագիտական վերլուծության, պլանավորման և մեթոդաբանության վարչություն				
	վարչության պետ	1	270,0		270,0
	գործավար	1	120,0		120,0
-	**Առևտրային կազմակերպությունների տնտեսական արդյունավետության վերլուծության և պլանավորման բաժին**				
	բաժնի պետ	1	225,0		225,0
	գլխավոր մասնագետ	2	170,0		340,0
	առաջատար մասնագետ	1	165,0		165,0
-	**Ծրագրերի ֆինանսատնտեսագիտական հիմնավորումների և աշխատանքների նորմավորման բաժին**				
	բաժնի պետ	1	225,0		225,0
	գլխավոր մասնագետ	1	170,0		170,0
	առաջատար մասնագետ	1	165,0		165,0

բ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչություն» գլխի 2-րդ կետում «1» և 6-րդ սյունակի «250,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «2» և «500,0» թվերով և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «24» և «4365,0» թվերը փոխարինել «25» և «5615,0» թվերով:

գ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ֆինանսական վարչություն» գլխի 8-րդ կետում «2» և «340,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «1» և «170,0» թվերով և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «33» և «6010,0» թվերը փոխարինել «32» և «5840,0» թվերով:

դ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ամբողջը՝ Երևանի քաղաքապետարան» տողում «405» և «46069,5» թվերը փոխարինել համապատասխանաբար «414» և «77829,5» թվերով:

ե. «Ամբողջը» տողում «1952» և «310111,59» թվերը փոխարինել համապատասխանաբար «1961» և «311871,59» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար-փոխվարչապետի իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու, Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությունները, դրանց կառուցվածքն ու հաստիքացուցակը հաստատելու մասին» N3-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի (Այսուհետ՝ նախագիծ) անհրաժեշտությունը պայմանավորված է Երևանի քաղաքապետարանի աշխատանքների իրականացման արդյունավետությունը բարձրացնելու և ստորև նշված հանգամանքներով՝

1. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության աշխատանքային ծանրաբեռնվածությունը հաշվի առնելով և վարչության գործառույթներն ավելի արդյունավետ իրականացնելու համար նախատեսվում է լրացուցիչ ավելացնել 1 միավոր վարչության պետի տեղակալի հաստիք:

2. Երևանի քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ու Երևանի ենթակայության առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական պլանավորման, վերլուծության (մոնիտորինգ) իրականացման նպատակով նախատեսվում է ստեղծել տնտեսագիտական վերլուծության, պլանավորման և մեթոդաբանության վարչություն, որը իրականացնելու է հետևյալ գործառույթները՝

1) Երևանի քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, պետական կառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից մշակված օրենքների ու այլ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ֆինանսատնտեսական մասով՝ առաջարկությունների ու եզրակացությունների ներկայացում, գործող օրենսդրական դաշտում ֆինանսատնտեսական մասով փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում և համապատասխան իրավական ակտերի նախագծերի նախապատրաստում, ֆինանսատնտեսական ծրագրավորման մեթոդաբանության և քաղաքականության մշակում:

2) Երևանի ենթակայության առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության մասով՝ մեթոդաբանության մշակում,

ծրագրավորման և վերլուծության իրականացում (մոնիտորինգ), դրա արդյունքների հիման վրա արդյունավետության գնահատում, արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկությունների ու եզրակացությունների ներկայացում, ֆինանսական հոսքերի ծրագրավորման մեխանիզմների մշակում, դրանց ներդրման և կատարելագործման աշխատանքներին մասնակցություն։

3. Նախատեսվում է կրճատել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության ներքին աուդիտի և ֆինանսական վերահսկողության բաժնի մեկ միավոր գլխավոր մասնագետի հաստիք։

Առաջարկվող բոլոր փոփոխություններին համաձայնություն տալու դեպքում Երևանի քաղաքապետարանի հաստիքացուցակում ներառված հաստիքային 1952 միավորների թիվը ավելանալու է 9-ով և այն կազմելու է 1961 միավոր՝ 1760,0 հազ. դրամ ամսական աշխատավարձի ֆոնդի ավելացմամբ։

Ելնելով վերոհիշյալից և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝ առաջարկվում է Երևանի ավագանու 06.07.2009թ. N3-Ա որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N3-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N3-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեում նախատեսվում է 15720.0 հազ.դրամի ծախսերի ավելացում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ